

ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԶԱՆ ԶՈՒԼՖԱՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱՐ-ԴՈՍԻ «ՊԱՅՔԱՐ» ՎԵՊԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՆՐԱՆՑ
ԽՈՍՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.146

ԱՄՓՈՓՈՒՄ

20-րդ դարի նշանավոր ռեալիստ գրող Նար-Դոսի (Միքայել Զաքարի Հովհաննիսյան, 1867-1933) թողած գրական մեծ ժառանգությունն ուսումնասիրելը հետաքրքրական է ոչ միայն հայ գրականության, այլև լեզվի տեսակետից: Նար-Դոսի վեպերը հարուստ են իմաստային և բառային նորաբանություններով, իր ժամանակաշրջանի համար նորագույն փոխառություններով, նորակազմ և փոխառյալ տերմիններով, որոնք լեզվական բարձր արվեստով ներկայացնում են նարդոսյան կերպարների բնավորության յուրօրինակ, իրական կյանքին շատ մոտ կողմերը: Վեպում պատմական ժամանակաշրջանը, քաղաքի կյանքը, մարդկանց հետաքրքրությունները, փիլիսոփայությունը, հայացքները, կրթությունն ու բնավորությունները արտացոլելու համար անհարժեշտ էին լեզվական նոր միջոցներ, նոր բառեր, ուստի գրական նոր ուղղության՝ ռեալիզմի հետ պետք էր թարմացնել նաև լեզվի բառապաշարը: Այսպիսով, բառապաշարի արժեքը որոշվում է բառերի ճիշտ ընտրությամբ և գործածությամբ, իմաստային նրբությունների հաշվառումով, կիրառական-ոճական դերով:

Բանալի բառեր և արքայապաշար. բառապաշար, նորաբանություններ, հեղինակային նորաբանություններ, հոգեբանական տերմիններ, հեգեզերլուծական բառեր, եվրոպական փոխառություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեղինակն իր հերոսների խոսքը կառուցելու և այն ավելի պատկերավոր դարձնելու համար դիմում է բառապաշարի տարբեր շերտերի՝ բարբառային, ժողովրդախոսակցական բառերի, փոխառությունների (ֆրանսերեն, հունարեն, լատիներեն, ռուսերեն), օտարաբանությունների, հնաբանությունների և նորաբանությունների կիրառությունների:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Նար-Դոսի վեպերի լեզվի ուսումնասիրությունը թեմատիկ առումով լայն ընդգրկվածություն ունի: Նման ուսումնասիրությունները հավասարապես լեզվաբանական, գրականագիտական, պատմական արժեք ունեն: Ըստ այդմ՝ հետազոտությունը կատարվել է համադրական-վերլուծական և զուգադրական մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Յուրաքանչյուր գրողի բառապաշարը և նրա ստեղծագործություններում կիրառված նորաբանությունները ուսումնասիրելու համար նախ և առաջ պետք է անդրադառնալ այն դարաշրջանին, որում ապրել և ստեղծագործել է գրողը:

Նար-Դոսը «Պայքար» վեպը գրել է 1911թ.: Սա քսաներորդ դարի սկիզբն է, երբ առաջադեմ երիտասարդությունը հագնվում է նորաձև, մտածում է նորաձև, նրա առաջ քաշած հայացքները մերժում են հինը և ազդարարում նորի մուտքը: Այս ամենը, սակայն, արտացոլվում է ոչ միայն վեպի հերոսների նկարագրություններում, այլ նաև նրանց խոսքում, քանի որ հենց խոսքը և նրանում կիրառված նորաբանություններն են բացահայտում հերոսին, նրա կենսափիլիսոփայությունն ու դրանից բխող արարքները:

Հեղինակն իր հերոսների կենցաղը, հագուկապը նկարագրելիս գործածել է այնպիսի նորամուտ փոխառություններ, ինչպիսիք են՝ *պենսնե*, *ժիլետ*, որ կրում էին այդ ժամանակաշրջանի առաջադեմ քաղաքաբնականները, *սիգար*, *սիգարետ*, *պապիրոս*, որ ծխում էին առաջադեմ մարդիկ, *ֆրանկ*, *ռուբլի* դրամական միավորների անվանումներ, որ այս դարաշրջանում շրջանառվել են

հասարակության որոշ խավերում: Նար-Դոսի վեպի հերոսներն առաջադեմ, կրթված, ժամանակակից երիտասարդներ են, որոնք իրենց խոսքում պարբերաբար գործածում են տարբեր ոլորտներին վերաբերող բազմաթիվ նորաբանություններ. հատկապես հետաքրքրական է վեպի հերոսների խոսքում նորակազմ և փոխառյալ նորաբանությունների կիրառությունը:

Արդ, առանձնացնենք վեպի հերոսների խոսքը բնութագրող նորաբանություններն ըստ իմաստային տարաբնույթ խմբերի.

1. հագուստ և աքսեսուարներ նշող բառեր՝ *պենսե, ժիլետ սյուրթուկ, կորսեթ, կիսակոշիկ, կասպոր,*
2. կերակուրների, ըմպելիքի, ծխախոտի անվանումներ՝ *բուլերբերոպ, կրենդել, լիմոնադ, պապիրոս, սիգար,*
3. արվեստին վերաբերվող բառեր՝ *ֆոյե, օրկեստր,*
4. հոգեբանական տերմիններ՝ *ֆլեգմատիկ, խարակտերիստիկ, զգայազուրկ, հոգեփոփոխություն,*
5. դրամական միավորներ՝ *ռուբլի, ֆրանկ, կոպեկ:*

«Պայքար» վեպի գլխավոր հերոսներն են՝

- Մանե - գլխավոր հերոսուհին, Սանթրոսյանի կինը,
- Աշոտ Բադամյան - Զաքարի եղբոր որդին, որին սիրում է Մանեն,
- Հեղինե Սոլիկյան - Մանեի մանկության ընկերուհին,
- Վահան - Մանեի հարազատ եղբայրը:

Այս կերպարներից յուրաքանչյուրին Նար-Դոսը նկարագրում է համապատասխան բառապաշարի միջոցով՝ ամբողջացնելու համար նրանց բնավորությունը, հայացքներն ու վարքագիծը: Փոխառյալ նորաբանություններն ու նորակազմ բառերն ավելի հաճախ հանդիպում են այն կերպարների բառապաշարում, որոնք առաջադեմ են, կրթված, լիբերալ, ուզում են փոխել իրենց իրականությունը և վերաբժնորել կանանց հայացքները:

Նկարագրելով իր հերոսների հագուկապը՝ հեղինակը տալիս է եվրոպական հագուստների անվանումներ, որոնք այդ տարիներին նոր էին մուտք գործել հայ

քաղաքաբնականների շրջանակ և որոնք բնութագրում էին առավել առաջադեմ, կրթված և զարգացած մարդկանց, ինչպես՝ *ժիլետ, կորսեթ, սյուրթուկ, կասսոր* և այլն:

Հեղինե Սոլիկյանը Մանեի ընկերուհին է, միևնույն ժամանակ Նասիբյանի սիրուհին. «Դեռևս շատ ջահել մի աղջիկ՝ ոսկե **պենսենով**, մինչև ուները խուզած գանգուր մազերով, առանց **կորսեթի**, գիրուկ, կլորիկ, ցածրահասակ, տեղնուտեղը եռանդ, կրակ ու ծիծաղ»¹:

Հեղինեի նկարագրության մեջ և խոսքում հանդիպում ենք մի շարք փոխառյալ նորաբանությունների, եվրոպական ծագում ունեցող բառերի, որոնք միտված են ցույց տալու նրա առաջադեմ հայացքները. նա շրջել է Եվրոպայում և այնտեղ բժշկական կրթություն է ստացել:

Պենսեն- [пенсe< ֆրանս. pince- nez, pincer< ճզմել, սեղմել + իտլ. nez քիթ] Առանց ականջներին հենվող եղջերիկների ականոց, որ քիթ վրա ամրանում պահվում է զսպանակավոր սեղմիչներով, քթակնոց (**Հայրապետյան Ա., 2011**):

Կորսեթ- [< корсет < ֆր. corset], գ. Սեղմիրան՝ լայն առաձգական գոտի, որ կապում են հագուստի տակից իրանը սեղմելու և կազմվածքին սլացիկություն տալու համար (**Հայրապետյան Ա., 2011**):

Ֆրանսիական ծագում ունեցող այս բառերը ռուսերենի միջնորդությամբ փոխանցվել են հայերենին և 19-րդ դարավերջին մեծ տարածում գտել հայ քաղաքաբնակ հասարկության շրջանում:

Հերոսուհու առաջադեմ լինելը առավել արտահայտիչ դարձնելու համար հեղինակը նրան տալիս է մեկ հանտկանիչ ևս. Հեղինեն հաճախ է «պապիրոս» ծխում:

«Ժամանակ-անժամանակ ներս կընկնի, չաչանակի պես կխոսի, լիրբ-լիրբ կծիծաղի, **պապիրոս** կքաշի»:

¹ Բնագրային օրինակները վերցված են Նար-Դոսի «Պայքար» վեպից (**Նար-Դոս, 1989**):

Պապիրոս-[< папироса < գերմ. Papier թուղթ], գ. (խսկց.) բառի դիմաց հայերենն ունի ծխախոտ՝ ծխախոտով գլանակ, թուփունով գլանակ ծխելու համար բառերը (**Հայրապետյան Ա., 2011**):

Հերոսուհու բառապաշարը բնութագրվում է հատկապես եվրոպական փոխառություններով: «Դու **պաթոսով** խոսել էլ ես իմանում, ես այդ չգիտեի,- բացականչեց նա ծիծաղելով»:

Պաթոս- պաթոս կամ պաֆոս (հուն.-ֆրանս.phatos, ռուս.-ից) խանդավառություն, ոգևորություն (**Մալխասեանց Ա., 1944**):

«Ես մի օրինակ կպատմեմ քեզ իմ **պրակտիկայից**» :

Պրակտիկա- [< практика < հուն, praktikos գործունյա], գ. 1. (փիլ.): Հասարակության գոյության անհրաժեշտ պայմանների ստեղծմանն ուղղված՝ մարդկանց ողջ գործունեության ամբողջությունը: 2. Կյանքը՝ իրականությունը՝ որպես որևէ կարգի գիտելիքների, եզրահանգումների կիրառման ու ստուգման բնագավառ: 3. Որևէ կարգի գիտելիքների գործնական կիրառումը՝ անհրաժեշտ հմտություններ ձեռք բերելու համար, որևէ բնագավառում հմտություն ձեռք բերելու համակարգված վարժությունների ամբողջությունը: 4. Տեսական գիտելիքների (ուսանողների, սովորողների) գործնական կիրառումը՝ որպես ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս: 5. Գործունեության որևէ բնագավառի աշխատանքի եղանակների ու հմտությունների ամբողջությունը: 6. (խսկց.): Զբաղմունքի որևէ բնագավառի գործունեություն՝ ըստ մասնագիտության (առավել, իրավաբանների և բժիշկների մասին) (**Հայրապետյան Ա., 2011**):

«Ո՞վ է գրել այդ հանցանքի, այդ մեղքի **կրիտերումը**»:

Կրիտերիում [< հուն.],գ. Տե՛ս կրիտերիա (**Հայրապետյան Ա., 2011**):

«Եթե դերասանուհի լինիս և մի որևէ տրագիական դեր լինիս կատարելիս որպիսի **ֆուրոր** կհանես քո այդ գեղեցկությամբ»:

Ֆուրոր- [< фурор < լատ. քերոր մոլեգնություն, վայրագություն], գ. Հրապարակային մեծ, աղմկահույզ, շոնդալից հաջողություն, որ ուղեկցվում է

հիացմունքի բուռն արահայաություններով (բուռն ծափահարություններով, «ուռա» գոչերով) (**Հայրապետյան Ա., 2011**):

Քո այդ սիրուն **մոնոլոգի**ց հետո ես միայն մի բան եմ ուզում հարցնել քեզ:

Մոնոլոգ- (հուն.-ֆրանս. monologue, ռուս.-ից) մենախոսություն (**Մալխասեանց Ս., 1944**):

Այսպիսով, Հեղինե Սոլիկյանի խոսքում ակնհայտ է, որ հեղինակը հաճախ է կիրառել փոխառյալ նորաբանություններ, որոնք նրա անհատականությունը, գաղափարները և առաջադեմ լինելը ընդգծելու միտում ունեն: Հեղինեն վեպի նորարար կերպարներից է:

Վահանը Մանեի հարազատ եղբայրն է. «Հսկայամարմին և թիկնավետ մի երիտասարդ՝ կես-այրված մի հաստ **սիգար** բերանին»:

Վահանի կերպարում առաջադիմականությունն ընդգծում է արդեն իսկ «սիգար» բառը:

Սիգար- [*< сигра < ֆր. cigare < իսպ. cigarro*], գ. Գլանակի ձևով փաթաթված ծխախոտի չոր տերևներ՝ ծխելու համար (**Հայրապետյան Ա., 2011**):

Վահանի կերպարն ամբողջացնում է *հոգեբանական տրամիների, հոգեվերլուծական բառերի* կիրառությունը, որոնք վեպերում փոխառյալ նորաբանություններ են կամ նորակազմ բառեր:

«Ես սարսափելի **էգոիստ** մարդ եմ. ուզում եմ աչքիցդ կարելուն չափ հեռու լինել»:

Էգոիստ [*< эгоист < ֆր. egoïste < լատ.], գ. Եսապաշտ, Եսամոլ Եսասեր՝ Եսապաշտությամբ աչքի ընկնող*] (**Հայրապետյան Ա., 2011**):

«Նա սառը, դու տաք. նա, այսպես ասած, **ֆլեգմատիկ**, դու՝ **սանգվինիկ**»:

Ֆլեգմատիկ [*флегматик < հուն, phlegmatikos լորձով լի՝ հարուստ*], ած. 1. Սառնասրտությամբ ու հավասարակշիռ գործելակերպով բնորոշվող: 2. Սառնասրտություն ու հանդարտություն արտահայտող պարունակող: 3. գ. Սառը՝ ոչ հախտուն բնավորությամբ մարդ (**Հայրապետյան Ա., 2011**):

Սանգվինիկ-[сангвиник < լատ. Sanguinis- արյուն, կենսական ուժ) խառնվածքի տեսակ, տաքարյուն խառնվածք, որն ունեցող մարդը շատ եռանդուն է, տպավորվող, ակտիվ, ունի հակազդման բարձր տեմպ, վարքը ճկուն է (**Նալչաջյան Ա., 1984**):

Հեղինակը Վահանի բառապաշարում հաճախ է գործածում օտարալեզու բացականչություններ:

«**Բրա՛վո, բրավո՛հիմո**,— նորից բացականչեց Վահանը այնքան բարձրաձայն, որ կառապանը ետ նայեց զարմացած»:

Բրավոհիմո [брависсимо < իտլ. bravissimo լավագույն], ձայն. Հիացմունք, խրախուսանք, հավանություն արտահայտելու ձև (**Հայրապետյան Ա., 2011**):

Բրավո [bravo < իտլ. bravo], ձայն. Հիացմունք, խրախուսանք, հավանության արտահայտման ձև (**Հայրապետյան Ա., 2011**):

Հերոսի խոսքը զուրկ չէ նաև օտարաբանություններից, օրինակ՝ «Սպասի՛ր, քեզ մի ուրիշ երևելի **էկզեմպլար** ցույց տամ,- շարունակեց Վահանը»:

Էկզեմպլար [< экземпляр < լատ. exemplar օրինակ], գ. (խսկց.): Նմուշ՝ նույնատիպ առարկաների, կենդանի էակների են օրինակ (**Հայրապետյան Ա., 2011**):

«Բայց էգուց չէ էլօր բախտ կունենաք կարդալու նրա **ռեցենզիան**»:

Ռեցենզիա-[рецензия <լատ. Recensio հետազոտում, գննում],գ. (խսկց.) գրախոսություն (**Հայրապետյան Ա., 2011**):

Հերոսի խոսքում նկատում ենք ոչ միայն փոխառյալ նորաբանությունների, օտարաբանությունների, այլև գիտական ոճին բնորոշ բառերի կիրառություններ: Այս ամենը նպաստում է կերպարաստեղծման յուրահատուկ սկզբունքին. հերոսի բառապաշարի բառընտրությունը և լեզվաոճական միջոցները տալիս են նրա անհատական-հոգեբանական նկարագիրը: Այսպիսով՝ Վահանը առաջադեմ է, կրթված և նորարար:

Աշոտ Բադամյանը Զաքարի եղբոր որդին է. սիրում է Մանեին: «Նրա լայն ուսերին շատ սազով նստած էր մոխրագույն բաճկոնը, որի տակից ամառվա

Հեղինակը հերոսների բառապաշարում կիրառում է նաև եվրոպական ծագում ունեցող դրամական միավորների անվանումներ. սրանք առավել հաճախ հանդիպում են «Պայքար» վեպում Վահանի, Սանթրոսյանի և Բադամյանի խոսքում:

«Թերևս այդքան հեգնորեն չխոսեր Բադամյանի մասին, եթե այդ հարյուր **ֆրանկի** պարտքը չլիներ»:

«Երկու **ֆունտի** չափ արդեն պակասել է ծանրությունս»:

«Այսօրվա կուրսով հարյուր ֆրանկը անում է երեսունհինգ **ռուբլի** քառասունհինգ կոպեկ»:

Ֆրանկ- [франк < ֆր. franc], գ. (ֆին.): Դրամական հիմնական միավոր Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Լյուքսեմբուրգում և Մանակոյում (**Հայրապետյան Ա., 2011**):

Ֆունտ- [фунт < գերմ. Pfund < լատ. pondus կշիռ, չափ], գ. 1. Ծանրության ուսական հին չափ =409.5 գրամի, գրվանքա: 2. Չափ ու կշռի անգլիական և ամերիկյան համակարգում՝ ծանրության չափ = 453.6 գրամի: 3. (հնգ.): Գազի՝ շոգու ճնշման չափի միավոր (**Հայրապետյան Ա., 2011**):

Ռուբլի- [ռուս, рубль], գ. (ֆին.): 1. Ռուսաստանի դրամական միավորը: 2. Այդ արժողությամբ թղթադրամ կամ մետաղադրամ: 3. Նախկին Խորհրդային Միության տարածքում գործող դրամական միավոր (**Հայրապետյան Ա., 2011**):

Եվրոպական կամ ուսական ծագում ունեցող դրամական միավորների անվանումներ կիրառվում են Վահանի և Բադամյանի երկխոսություններում, ինչից ակներև է, որ նրանք ոչ միայն առաջադեմ, այլև բարեկեցիկ կյանքով ապրող երիտասարդներ են:

Այսպիսով՝ ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, Նար-Դոսը կարողանում է վարպետորեն դրսևորել իր անհատական ստեղծագործական ունակությունները, օգտագործել համազգային լեզվի հնարավորությունները՝ որպես կերպարի ստեղծման և նրանց սոցիալ-հոգեբանական էությունը բացահայտելու միջոցի,

դրանով իսկ անհատականացնելով և ոճավորելով հերոսների լեզվական պատյանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով Նար-Դոսի <<Պայքար>> վեպի բառապաշարը՝ հանգել ենք մի շարք եզրակացությունների:

1. Նար-Դոսի վերոհիշյալ վեպը հարուստ է ինչպես սեփական լեզվամիջոցներով կազմված, այնպես էլ փոխառյալ նորաբանություններով, պատճենումներով, հատկական փոխառություններով:
2. «Պայքար» վեպի հերոսների նկարագրություններում և երկխոսություններում գործածված են մի շարք նորաբանություններ, որոնք կարող ենք դասակարգել ժամանակակից կյանքն ու բարքերն արտացոլող իմաստային խմբերում /հագուստ և աքսեսուարներ նշող բառեր, կերակուրներ, ըմպելիքի, ծխախոտի անվանումներ, արվեստին վերաբերող բառեր, հոգեբանական տերմիններ, դրամական միավորների անվանումներ/:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Է. (1976)**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
2. **Եզեկյան Լ. (2007)**, Հայոց լեզու, Երևանի համալսարանի հրատ.:
3. **Էլոյան Ս. (1989)**, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
4. **Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (1969)**, Երևան, հհ. 1-4, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
5. **Խալաթյան Գ., Զուլֆայան Ռ. (2018)**, Տեսական և գործնական հայոց լեզու /հնչյունաբանություն, բառագիտություն/, Երևան, «Արտագերս» հրատ.:
6. **Հայրապետյան Ա. (2011)**, Օտար բառերի բառարան, Երևան, Հեղինակային հրատ.:

7. **Մալխասեանց Ս. (1944)**, Հայերէն բացատրական բառարան, Երևան, հ.1-4, ՀՍՍՌ Պետական Հրատ.:
8. **Նալչաճյան Ա. (1984)**, Հոգեբանական բառարան, Երևան, «Լույս» հրատ.:
9. **Նար-Դոս (1989)**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, «Խորհրդային գրող» հրատ.:

REFERENCES

1. **Aghayan E. (1976)**, Ardi hayereni bacatrakan bar'aran /Explanatory Dictionary of Modern Armenian/, Yerevan, "Hayastan" Publishing House.
2. **Yezeqyan L. (2007)**, Hayoc lezow /Armenian Language/, Yerevan, Yerevan University Publishing House.
3. **Eloyan S. (1989)**, Jhamanakakic hayereni bar'ayin otwabanowt'yown /Stylistics of Contemporary Armenian Vocabulary/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
4. **Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran/Explanatory Dictionary of Contemporary Armenian Language/ (1969)**, Yerevan, Vols. 1–4, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
5. **Khalatyan, G., Julfayan, R. (2018)**. Theoretical and Practical Armenian Language (Phonetics, Lexicology), Yerevan, "Artagers" Publishing House.
6. **Hayrapetyan A. (2011)**, O'tar bar'eri bar'aran /Dictionary of Foreign Words/, Yerevan, Author's publishing house.
7. **Malkhaseants S. (1944)**, Hayere'n bacatrakan bar'aran /Armenian Explanatory Dictionary/, Yerevan, Vols. 1–4, Armenian SSR State Publishing House.
8. **Nalchadjyan A. (1984)**, Hogebanakan bar'aran /Psychological Dictionary/, Yerevan, "Luys" Publishing House.
9. **Nar-Dos (1989)**, Erkeri jhoghovac'ow /Collected Works/, Vol. 2, Yerevan, "Khorhrdayin grogh" Publishing House.

Рузан Джулфаян, Армине Арутюнян

**Характеристика героев романа Нар-Доса «Борьба» на основании
используемых в их речи неологизмов**

Заключение

Ключевые слова и выражения: лексика, неологизмы, авторские новообразования, психологические термины, психоаналитическая лексика, европейские заимствования.

Изучение богатого литературного наследия выдающегося реалиста XX века Нар-Доса (Микаэл Захарий Ованнисян, 1867–1933) представляет интерес как с литературоведческой, так и с лингвистической точки зрения. Романы Нар-Доса насыщены смысловыми и лексическими неологизмами, современными для того времени заимствованиями, а также новообразованными и заимствованными терминами, которые с высоким языковым мастерством раскрывают уникальные и жизненно правдивые черты характера героев. Для того чтобы в художественном произведении отразить историческую эпоху, городскую жизнь, интересы людей, их философию, взгляды, образование и характер, автору были необходимы новые языковые средства — новые слова. В этом контексте реализм как новое литературное направление потребовал также обновления словарного состава языка. Таким образом, ценность словарного запаса определяется точностью выбора и употребления слов, учётом семантических оттенков и стилистико-функциональной роли лексических единиц.

Стремясь сделать речь своих героев выразительной и образной, автор обращается к различным слоям лексики. Он использует диалектные и разговорные слова, а также заимствования из французского, греческого, латинского и русского языков. В тексте часто встречаются также иноязычные элементы, архаизмы и неологизмы, которые в совокупности придают языку особый стиль и насыщенность.

Ruzan Julfayan, Armine Harutyunyan

Characterization of the heroes of Nar-Dos's novel "*Struggle*" Based on the neologisms used in their speech

Conclusion

Key words and expressions: *vocabulary, neologisms, authorial neologisms, psychological terms, psychoanalytic words, European borrowings.*

The literary legacy of prominent 20th-century realist writer Nar-Dos (Mikael Zakari Hovhannisyan, 1867–1933) is of interest not only from a literary but also a linguistic perspective. Nar-Dos's novels are rich in semantic and lexical neologisms, contemporary borrowings for his time, newly coined and borrowed terms, which, through high linguistic artistry, vividly depict the unique and lifelike traits of Nar-Dosian characters. To reflect the historical period in the novel, city life, people's interests, philosophy, worldview, education, and characters, new linguistic means and vocabulary were essential. Therefore, along with the new literary trend of realism, it was necessary to enrich and update the vocabulary of the language. Thus, the value of vocabulary is determined by the accurate selection and use of words, consideration of semantic nuances, and their functional-stylistic role.

In an effort to make his characters' speech more expressive and vivid, the author draws on various layers of vocabulary. He uses dialectal and colloquial words, as well as borrowings from French, Greek, Latin, and Russian. Foreign words, archaisms, and neologisms also frequently appear, contributing to the unique style and richness of the language.

Ռուզան Ջուլֆայան - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունը՝ ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է շուրջ 50 հոդվածի: julfayanruzan01@aspu.am

Արմինե Հարությունյան - Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանի ուսուցչուհի, Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջի դասախոս, հետաքրքրությունների շրջանակը՝ ժամանակակից հայոց լեզու: armineharutyunyan489@mail.ru

Рузан Джулфаян - Доцент кафедры армянского языка и методики его преподавания имени Арарата Гарибяна Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна. Научные интересы: современный армянский язык. Автор более 50 научных статей. julfayanruzan01@aspu.am

Армине Арутюнян - преподаватель базовой школы АГПУ, лектор Ереванского государственного технического колледжа. Научные интересы: современный армянский язык. armineharutyunyan489@mail.ru

Ruzan Julfayan – Associate Professor at the Chair of Armenian Language and Its Teaching Methodology after Ararat Gharibyan, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan. Scientific interests: Contemporary Armenian Language. Author of around 50 articles. julfayanruzan01@aspu.am

ARMINE HARUTYUNYAN – Teacher at the ASPU Basic School, **Yerevan State Technological College (YSTC)**, Lecturer at Fields of interest: Contemporary Armenian Language. armineharutyunyan489@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 02.02.2024թ.

Հանձնարարվել է գրախոսության 26.02.2024թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ

